Ե՞ՐԲ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ ՄՐԵՆԻ ՏԱՃԱՐԸ

Ճարտ. դոկտոր Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության նշանավոր կառուցվածքներից Մրենի տաճարը ըստ իր հատակագծային հորինվածքի ներկայացնում է երկայնական և կենտրոնագմբեթ տիպերի մի ուշագրավ սինթեզ և խիստ կարևոր տեղ է գրավում չորս գմբեթակիր մույթեր ունեցող տիպի հուշարձանների շարքում առհասարակ։

Այդ է պատճառը, որ առանձնակի կարևորություն է ստանում տաճարի կառուցման հանգամանքների և թվագրության որոշումը։ Բավական է նշել, որ մինչև այժմ էլ մասնագիտական գրականության մեջ չկա միասնական տեսակետ այս մասին և հայտնված են մի շարք իրարամերժ կարծիքներ։

Այսպես, օրինակ, Թորոս Թորամանյանը 1909 թ. հրատարակած «Հայ ճարտարապետությունը Անիի և Երվանգակերտի մեջ» հոդվածում գրում է, որ «Մրենի մեջ, չնայելով դարավոր անտերության, հրաշքով, գրեթե անաղարտ պահված է VII դարում Դավիթ Սահառունիի շինել տված հոյակապ կաթողիկեն»[1]։ Սակայն որոշ ժամանակ անց (հավանաբար 1913 թ., երբ հրատարակվեց Գ. Հովսեփյանի «Քարտեզ հայ հնագրության» աշխատությունը), նա նորից է անդրադառնում այս հարցին, և գրում հետևյալը. «Առհասարակ մատենագիրները տեղեկություն են տալիս, որ Դավիթ Սահառունին Մրենի մեջ կանգնեց մի շքեղ եկեղեցի։ Ներկայիս, պատմագիրների այդ տեղեկությունները վերագրվում են այժմ Մրենի մեջ կանգուն, երևցող մեծ տաճարին, առանց որևէ վարանումի։ Սակայն վերջերս այդ համոզումը կասկածելի դարձավ շենքի վրա շինության արձանագրության մասնակի վերծանումով, որ տեղի բարձրության և մասամբ քարերի մաշվածության պատճառով չէր կարդացվում։

Վերջերս, շնորհիվ լավ լուսանկարի, լուսանկարին վրա հնարավոր եղավ կարդալ մի քանի անուններ, որով հավանականություն դարձավ, թե այն եկեղեցին ոչ թե Դավիթ Սահառունիին շինածն է, այլ Կամսարական շինարար տոհմի շառավիղներից մեկն է շինած։ Արձանագրության մեջ հիշված Հերակլ կայսեր և Շիրակա ու Արշարունյաց տեր Ներսեհի անունների գոյությունն ժամանակը միանգամայն փոխվում է և չի համապատասխանում Դավիթ Սահառունիի ժամանակին։ Բայց մի բան շատ տարօրինակ է, որ այս եկեղեցիի մասին, իբրև Կամսարականների շինություն, ոչինչ չեն հիշում հայ պատմագիրները։ Իսկ Դավիթ Սահառունիի կանգնած շենքի մասին, որ այնչափ գովեստով են խոսում, ոչինչ գոյություն չունի տեղին վրա. տարակույս չկա, որ լիակատար ավերակի է փոխված Դավիթ Սահառունիի կանգնած շենքը»[2]։ Մրենի

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատ. 1, Երևան, 1942, էջ 297։

[2] Նույն տեղում, էջ 295։

տաճարին անդրադարձել է նաև Մ. Տեր-Մովսիսյանը, թվագրելով այն 600—625 թթ. միջև[3]։

Տաճարի շինարարական արձանագրությունը շատ ավելի ուշ ժամանակներով է թվագրում Կ. Կոստանյանը, որի կարծիքով այն իբր կառուցվել է 670 թ.[4]։

1913 թ. տաճարի շինարարական արձանագրության վերծանման առնչությամբ տաճարի կառուցման հանգամանքներին մանրամասն կերպով անդրադարձավ Հովսեփ Օրբելին։ Նրա կարծիքով տաճարի շինարարությունն ավարտվել է Դավիթ Սահառունու կյուրապաղատության տարիներին, այն է՝ 639 կամ 640 թթ.[5]։

Հ. Օրբելու այս կարծիքը լիովին բաժանեց Գ. Հովսեփյանը, որը և նորից հրատարակեց մեղ հետաքրքրող արձանագրությունը[6]։

Վերջերս այս արձանագրությանը անդրադարձավ Ա. Մանուչարյանը, առաջարկելով արձանագրության թվագրման իր ընթերցումը, որի հիման վրա Մրենի տաճարը ներկայացված է որպես 613 թ. գործ[7]։

Դժվար չէ տեսնել, որ թվագրությունների նման տարբերությունները (613—670) չեն կարող նպաստել հայկական վաղ միջնադարյան ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից մեկի ճարտարապետական հորինվածքի ճիշտ գնահատմանը, և բնավ էլ պատահական չէ, որ առանձին աշխատություններում կառուցվածքը մեկնաբանվում է միանգամայն սխալ դիրքերից և առաջ են քաշվում տեսություններ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն իրականության հետ։

Այս պայմաններում առաջնակարգ անհրաժեշտություն է դառնում մատենագրական տեղեկությունների և կառուցվածքի շինարարական արձանագրության զուգահեռ վերլուծությունը, ըստ որում, ինչպես կտեսնենք ներքևում, մատենագրական տեղեկությունները մեծապես նպաստում են արձանագրության վերծանմանը, որը, ինչպես հայտնի է, մեզ է հասել եղծված դրությամբ. անհայտացել են հատկապես այն քարերը, որոնց վրա գրված է եղել տաճարի կառուցման թվականը։

Արդ տեսնենք, թե ինչ են հաղորդում Մրենի տաճարի մասին հայ միջնադարյան պատմիչները։

Մրենի տաճարի մասին առաջին տեղեկությունը, որ գտնում ենք ժամանակով առավել մոտ կանգնած պատմիչների մոտ, դա Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակությունն է։ Նա գրում է, որ «ի սմին յայսմիկ աւուրս կայսրին Հերակլ զԴաւիթ Սահառունի Կուրապաղատ արարեալ՝ իշխան Հայոց կացուցանէր, որ մեծաւ ճոխութեամբ և յաղթութեամբ բազմաւ քաղաքավարէր

---

3 Ս. Տեր-Մովսիսյան, Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, Վաղարշապատ, 1911, էջ 105։

4 «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանյան, ՍՊր., 1913, էջ 2։

5 И. А. Орбели, Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII в., «Христианский Восток», т. II, кн. I, СПб, 1913, նույնը И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 395 և 420։

6 Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 173։

7 Ա. Ա. Մանուչարյան, Մրենի և Թալինի տաճարների շինարարական արձանագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 47։

զիշխանութիւնն ամս Դ. և ի հրամանէ նորուն շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար որ ի քաղաքատեղն Մրենն»[8]։

Հաջորդ տեղեկությունը հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, գրելով հետևյալը. «Իսկ յետ սպանման մարզպանացն Ճիհր Բուրզենայ, Ճիհր Վըշնասպ, Սուրենայ, Ճիհր Վղոն Միհրանայ, և այլ տաճկաստանացն, Դաւիթ Սահառունի մարզպան լեալ ամս երեսուն։ Յաւուր սորա ի ԿԲ թուականին եղև շինուած կաթողիկէին Մրենոյ»[9]։

Ահա այս առնչությամբ էլ կարևոր նշանակություն է ստանում այն հարցը, թե երբ է Դավիթ Սահառունին Հայաստանի կառավարիչ եղել և որ տարիներին է նա մարզպան եղել, որ տարիներին կյուրապաղատ, նշանակված Բյուզանդիայի կողմից։

Բանն այն է, որ Սեբեոսը Դավիթ Սահառունուն հիշատակում է միայն Աթալարիկոսի դավադրության կապակցությամբ, երբ VII դարի 30-ական թթ. վերջին Դավիթ Սահառունուն Հայաստանի կյուրապաղատ նշանակեց Հերակլ կայսրը։ Ըստ էության նույնն է հաղորդում նաև Դրասխանակերտցին։

Սակայն Ասողիկն արդեն այլ տեղեկություն է բերում, գրելով, որ Դավիթ Սահառունին Հայաստանի մարզպան է եղել շուրջ 30 տարի, և այդ պաշտոնին է նշանակվել պարսից Որմիզդ արքայի կողմից։ Նա գրում է. «Իսկ յետ սուսերահարն լինելոյ Սուրենայ ոչ ևս պարսիկ մարզպան առաքէր ի Հայս թագաւորն պարսից. այլ ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ հայոց զԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս Լ հրամանաւ Որմիզդի, որդոյ Խոսրովու պարսից արքային»[10]։

Ուշագրավ է, որ Ասողիկին հայտնի է նաև Դավիթ Սահառունու Հայաստանի կառավարիչ լինելը VII դարի 30-ական թթ. վերջին. նա գրում է, որ «...Իսկ զկնի Դաւիթ Սահառունայ եկաց իշխան Հայոց Թէոդորոս Ռշտունի ամս Իէ»[11]։

Ինչպես տեսանք վերը, Դավիթ Սահառունու 30-ամյա մարզպանության մասին հիշատակում էր նաև Կիրակոս Գանձակեցին, թեև ավելի մոտ կանգնած պատմիչները և հատկապես Սեբեոսը ու նրանից հետո եկող Դրասխանակերտցին, այս մասին ոչինչ չեն հիշատակում։

Խիստ ակնհայտ են հակասությունները Ասողիկի և Կիրակոս Գանձակեցու հիշատակություններում։ Այսպես, հայտնի է, որ Սուրեն մարզպանը սպանվել է 571 թ., մինչդեռ Որմիզդը գահ է բարձրացել շուրջ քսան տարի հետո։ Ստացվում է, որ Դավիթ Սահառունին մարզպան է եղել կամ 571—601 թթ. և կամ 590—610 թթ. միջև։ Մինչդեռ լավ հայտնի է նաև, որ նա Հայաստանի կյուրապաղատ էր 639—640 թթ., ընդ որում այդ պաշտոնին նա նշանակվեց այն բանից հետո, երբ խորտակելով իր կապանքները, սպանեց իրեն ձերբակալող Մժեժ Գնունուն։ Եվ եթե ընդունենք, որ Դավիթ Սահառունին կարող էր մարզպան նշանակվել ոչ վաղ, քան 30 տարեկան հասակում, ապա 640 թ. նա, համաձայն առաջին տեղեկության, պետք է լիներ 100 տարեկան, իսկ երկրորդ

---

[8] «Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 8։

[9] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 53։

[10] «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 86։

[11] Նույն տեղում, էջ 88։

գեպքում՝ 80, մի բան, որը բնավ չի կապվում այն բուռն գործունեության հետ, որ նա ծավալել էր VII դարի 30-ական թթ. վերջին։

Մյուս կողմից, լավ հայտնի է, որ VII դարի սկզբին մարզպան է նշանակվում Սմբատ Բագրատունին և այսպիսով Դավիթ Սահառունին կարող էր մարզպան լինել կամ մինչև Սմբատ Բագրատունին, VI դարի վերջին տասնամյակին, կամ նրանից հետո, մինչև 628 թ., երբ մարզպան է դառնում Սմբատ Բագրատունու որդին՝ Վարազտիրոցը։ Որ VI դարի վերջին տասնամյակներին հայտնի չէ և ոչ մի հայ մարզպան, դա ակնհայտ է դառնում Սեբեոսի հիշատակություններից։

572 թ. ապստամբությունը, որը վայրագությամբ ճնշվեց Պարսկաստանի կողմից, և դրան հաջորդող անհանգիստ դրությունը, երբ մեկ այստեղ, մեկ այնտեղ ռազմական գործողություններ էին բռնկվում, բնավ չէին նպաստում հայ մարզպանի նշանակվելուն։ Սեբեոսը բերում է պարսիկ մարզպանների մի ամբողջ ցուցակ, որոնք ուղարկվել էին Հայաստան երկիրը սրի քաշելու և հնազանդ պահելու համար։ Նա հիշատակում է նրանց անունները՝ Վշնասպ Ռոզոն, Միհրան, Տոմ Խոսրով, Վարազ Վզուր, Հրահատ, Դատան, Վընդատական, Խորական, Մերակբուտ, Յազդեն, Բուտմահ, Հոյիման[12]։ Մի այլ տեղ նա գրում է. «Եւ այս են սահմանակալք տերութեանն Պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի և ի Դուին քաղաք։ Վնդատական, Նիխորական, զսա սպանին զաւրքն պարսից ի Դուին, և ինքեանք ապստամբեալ գնացին ի Գեղումս։ Ապա Մերկուտ, ապա Յազդեն, ապա Բուտմահ, ապա Յէմանն»[13]։

Դատան մարզպանի մասին նա գրում է, որ «առ սովաւ սպանաւ Որմիզդ»[14], ուրեմն Դատանը մարզպան էր դեռևս 590 թ., և նրանից հետո վեց մարզպանների առկայությունը մինչև Սմբատ Բագրատունու մարզպան նշանակվելը ինքնին արդեն ի չիք է դարձնում Դավիթ Սահառունու մարզպան լինելու հնարավորությունը VI դարի վերջին տասնամյակների ընթացքում։

Հայ մարզպանի նշանակվելը ամենասերտ կերպով առնչվում էր այն քաղաքական իրադրության հետ, որը ստեղծվել էր VII դարի սկզբին, երբ հաղթական պարսից զորաբանակները հետ էին շպրտել բյուզանդական զորքերին, հայկական տերիտորիայի մեծ մասը անցել էր պարսից տիրապետության տակ, իսկ բյուզանդական զորքերը կրում էին պարտություն պարտության ետևից։

Նշանավոր զորավար Սմբատ Բագրատունին մեծ պատիվների էր արժանացել պարսից արքունիքում։ Պատմիչների հիշատակություններն այն մասին, որ իր կյանքի վերջին տարիներին Խոսրով արքան նրան կանչում է Տիզբոն, որպեսզի այլևս պատերազմ չգնա և հանգիստ ապրի, թվում է Սմբատին փարաբանելու մի միջոց է միայն, չափազանցություն, որը պետք է ցույց տա, թե ինչպիսի պատիվների էր նա արժանացել։ Մինչդեռ այն հանգամանքը, որ նա ամենաակտիվ մասնակցություն է ունեցել 616 թ. եկեղեցական ժողովին, որտեղ կաթողիկոս ընտրվեց Կոմիտասը, ինքնին վկայում է, որ Սմբատ Բագրատունին բնավ էլ չէր հեռացել հայկական գործերից և մինչև իր մահը (617) ամենայն հավանականությամբ Հայաստանի մարզպանությունը նրա ձեռքում

---

[12] «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 30։

[13] Նույն տեղում, էջ 71։

[14] Նույն տեղում, էջ 31։

էր մնում։ Համենայն դեպս չունենք և ոչ մի փաստ հակառակը պնդելու համար և այս շրջանում հայտնի չէ և ոչ մի այլ մարզպան՝ նշանակված պարսից թագավորի կողմից։

Արժե հիշատակել, որ 628 թ. նույն Սմբատ Բագրատունու որդին՝ Վարազտիրոցն է, որ մարզպան է նշանակվում Խոսրով արքայի կողմից։ Նա մեծացել էր պարսից արքունիքում և անմիջապես չփոխարինեց հորը թերևս միայն երիտասարդ լինելու պատճառով։ Այս ևս վկայում է, որ ոչ մի հիմք չկա ենթադրելու, թե Սմբատ Բագրատունին դեռևս իր կենդանության տարիներին զրկվել էր Հայաստանի մարզպանի պաշտոնից։ Այս ամենը հարցականի տակ է դնում Կիրակոս Գանձակեցու հիշատակությունն այն մասին, թե Դավիթ Սահառունին մարզպան էր դեռևս 613 թ., և հենց այդ ժամանակ էլ իբր կառուցվել է Մրենի տաճարը։ Թվում է, որ միանգամայն իրավացի են Արամ Տեր-Ղևոնդյանը և Հրաչ Բարթիկյանը, երբ գրում են, որ «ամենայն հավանականությամբ Դավիթ Սահառունին եղել է մարզպան Սմբատ և Վարազտիրոց Բագրատունիների մարզպանության միջև ընկած տարիներին»[15]։

Ահա այս պայմաններում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ասողիկի ձեռագրերից մեկում հանդիպող հիշատակությունը Մրենի տաճարի կառուցման մասին։ Խոսելով Կոմիտաս կաթողիկոսի գործունեության մասին. Ասողիկը գրում է. «Ի Մրեն զեկեղեցի սա շինեաց»[16]։

Առանձնապես ուշագրավ է, որ այդ հանդիպում է հենց այն ձեռագրում. որտեղ հիշատակվում է 'Դագկաշենի ճարտարապետի՝ Տրդատի անունը[17]', և մենք ոչ մի հիմք չունենք չհավատալու նրան։ Այս պայմաններում երբ բաղդատում ենք Կիրակոս Գանձակեցու հիշատակությունը իրանական դեպքերին շատ ավելի մոտ կանգնած պատմիչների տվյալների հետ, ապա պարզ է դառնում, որ բնավ չի կարելի ամբողջությամբ ընդունել Գանձակեցու հիշատակությունը, և թվում է, որ այստեղ ևս (ինչպես այդ սովորական երևույթ է ուշ շրջանի պատմիչների մոտ) շփոթված են շուրջ կես հազարամյակ առաջ կատարված դեպքերի թվականները, և հենց այդ ճանապարհով էլ Դավիթ Սահառունին 613 թ. դարձել է Հայաստանի մարզպան և այդ պահին էլ իբր կառուցվել է Մրենի տաճարը։

Մի կողմ թողնելով Գանձակեցու հաղորդումը Սահառունու երեսնամյա մարզպանության մասին, որը ամենայն հավանականությամբ իր հիմքում ունի Ասողիկի հիշատակությունը և որը, ինչպես տեսանք վերը, բնավ չի կարող վստահելի լինել։ Դառնանք նրա Մրենի տաճարը ԿՀ=613 թ. կառուցված լինելու մասին հիշատակությանը։ Մեր կարծիքով այնտեղ պարզապես գրչական սխալ է տեղի ունեցել, և գրիչները շփոթել են միմյանց հաջորդող և գրչական ձևով միմյանց մոտ գրերը և ՀԿ=623 թվականի փոխարեն գրել են ԿՀ, և այսպիսով տաճարի կառուցման տարեթիվը մի ամբողջ տասնամյակով առաջ է տարվել։

Մինչդեռ 623 թ. լիովին համապատասխանում է և՛ Դավիթ Սահառունու մարզպանության հավանական տարիներին, և՛ Ասողիկի այն հիշատակությանը, որ Մրենի տաճարը կառուցվել է Կոմիտաս կաթողիկոսի աթոռակալության ժամանակ։

---

15 Լեո, Երկերի ժողովածու, հատ. II, Երևան, 1967, ծանոթագրություններ, էջ 735։

16 Ասողիկ, էջ 87։

17 Նույն տեղում, էջ 282։

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Մրենի տաճարը հիմնադրվել է Դավիթ Սահառունու մարզպանության և Կոմիտաս կաթողիկոսի աթոռակալության տարիներին, ամենայն հավանականությամբ 623 թ.։

Արդ տեսնենք, ինչքանով է համապատասխանում այս դրությին տաճարի շինարարական արձանագրությունը։

Մրենի տաճարի շինարարական արձանագրության առաջին հիմնավոր վերլուծությունը տվել է Հ. Օրբելին վերը նշված իր արժեքավոր հոդվածի մեջ։ Արձանագրությունը մեզ է հասել եղծված դրությամբ, այնտեղ բացակայում են առաջին քարը, կենտրոնական քարը (ըստ Հ. Օրբելու համարակալման № 7-ը) և վերջին՝ արձանագրությունը ավարտող քարը (նկ. 1)։

Ելնելով պատմիչների հիշատակություններից և արձանագրության մեջ հիշատակվող կյուրապաղատ տիտղոսի առկայությունից, Հ. Օրբելին ենթադրում է, որ բացակայող (№ 7) քարի վրա հիշատակվել է Դավիթ Սահառունու անունը։ Եվ որովհետև հայտնի են Դավիթ Սահառունու կյուրապաղատության տարիները, ամբողջ արձանագրությունն էլ նա թվագրում է 639—640 թթ.։ Նրա կարծիքով երկրորդ քարի վրա պահպանված «Որդի» վերջածանցը պետք է կազմի [ԱՄԻՈՅՆ ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐ]ՈՐԴԻ կամ [ԱՄԻՈՅՆ ԵՐԵՍՆԵՐ]ՈՐԴԻ թվականների անբաժանելի մասը[18] (նկ. 1)։

Սակայն, ինչպես նշում է Հ. Օրբելին, հիշյալ թվականների շարադրանքը կազմող տառերի քանակը (մի դեպքում 13, իսկ մյուս դեպքում 17 գիր) պարզապես չէր կարող տեղավորվել մի քարի վրա, և այն խիստ առաջ պետք է գնար մյուս տողերի համեմատ։ Այդ պատճառով էլ Հ. Օրբելին նրանց տեղաբաշխում է երեք տողով և արձանագրության առաջին քարը պատկերում է հետևյալ կերպ.

ԱՄԻՈՅ ՆՔՍԱՆԵ ԻՒՆՆԵՐ	կամ	ԱՄԻՈ ՅՆԵՐ ԵՍՆԵՐ

Թվագրության նման տեղաբաշխման դեմ իրավամբ առարկում է Ա. Մանուչարյանը, գրելով, որ «արձանագրության սկզբում անսովոր տեղադրության այս ձևը VII դարում բոլորովին չի հանդիպում»[19]։ Նա առաջարկում է թվագրության իր վերծանումը, ելնելով արդեն Կիրակոս Գանձակեցու հիշատակած ԿԲ—613 թվականից, և առաջին տողը նրա կարծիքով ունեցել է (ՅԱՄԻ ԵՐ-Ր)ՈՐԴԻ շարադրանքը, որը և համապատասխանում է Հերակլ կայսրի գահակալության երրորդ տարվան, և տառերի քանակով լիովին կարող է տեղ գտնել առաջին քարի վրա (նկ. 1)։

Սակայն, ինչպես տեսանք վերը, 613 թ. լուրջ առարկություններ է առաջացնում և բնավ չի կարող ընդունելի լինել։ Ավելին, այն խիստ հակասության մեջ է բուն արձանագրության հետ, և Ա. Մանուչարյանի փորձերը համապատասխանեցնել նշված 613 թ. արձանագրության մեջ հիշատակվող այլ տվյալների հետ, չեն կարող համոզիչ լինել, թեև միանգամայն իրավացի է նա, երբ առաջին և երկրորդ տողերի վերջավորությունները որոնում է ոչ թե տասներկուերորդ, այլ առաջին քարի վրա։ Չի կարող տարակուսանք չառաջացնել ար-

18 И. А. Орбели, Избранные труды, էջ 396։
19 Ա. Մանուչարյան, նշվ. հոդվ., էջ 247։



ձանագրությունը Հերակլի գահակալության տարիներով թվագրելու հանգամանքը։ Բանն այն է, որ այն պահին, երբ հիմնադրվում էր Մրենի տաճարը (ըստ Ա. Մանուչարյանի՝ 613 թ.), Հայաստանի մեծ մասը գտնվում էր պարսից տիրապետության տակ, և Հայաստանի մարզպանն էր, հոդվածի հեղինակի իսկ խոսքերով, պարսից արքայի կողմից նշանակված Դավիթ Սահառունին։ Սակայն իրավացիորեն հարց է առաջանում. եթե իրոք այդ այդպես է եղել, ինչո՞ւ է նորակառույց տաճարը թվագրվում թշնամի պետության թագավորի գահակալության տարիներով, չէ որ այն շրջանում ուժեղ մարտեր էին գնում Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, ընդ որում բյուզանդական բանակը պարտություններ էր կրում, իսկ բյուզանդական կայսրերը թախանձագին խաղաղություն էին խնդրում Խոսրովից։

Բավական է վերհիշել, թե ինչպիսի դրության մեջ էր ինքը՝ Հերակլը 610—615 թթ., երբ պարսկական զորքերը գրավել էին Երուսաղեմը և հասել Կոստանդնուպոլսի արվարձաններին, գրավելով Քաղկեդոնը, իսկ նույն Հերակլը պատրաստվում էր մայրաքաղաքը Աֆրիկա տեղափոխել։

Եվ ահա, այս հաղթարշավների պահին, նույն պարսկական ծառայության մեջ գտնվող իշխանը իր իսկ կառուցած տաճարը հանկարծ թվագրում է ոչ թե հաղթական Խոսրովի, այլ կործանման եզրին կանգնած Հերակլի գահակալության տարիներով։

Տրամաբանակա՞ն էր այս. անշուշտ, ոչ։ Ա. Մանուչարյանը ինքն էլ է նկատում այդ և գրում է հետևյալը. «Արձանագրությունների թվագրման հարցում այդպիսի նկատառումներ չեն եղել։ Նրանց թվականները գրվել են միանգամայն կամայականորեն»։ Որպես ապացույց բերում է Բագարանի և Ալամանի արձանագրությունները, որոնցից առաջինը թվագրված է Խոսրովի, իսկ մյուսը՝ Հերակլի գահակալության տարիներով։ Սակայն այստեղ անհրաժեշտ է նշել, որ երբ հիմնադրվում էր Բագարանը[20] (624), իսկ արձանագրության մեջ հենց այդ է շեշտվում, Հայաստանը իրոք գտնվում էր պարսից տիրապետության տակ, իսկ երբ կառուցվում էր Ալամանը (637), գերիշխում էր արդեն Բյուզանդիան[21]։ Այս մոտեցումը պահպանվում է VII դարի համարյա թե բոլոր շինարարական արձանագրություններում։ Այսպես, օրինակ, Բագավանի տաճարը հիմնադրվել է 631 թ. և ավարտվել 639 թ. բյուզանդական գերիշխանության տարիներին և միանգամայն բնական է, որ այն թվագրված է Հերակլի գահակալության տարիներով[22]։ Արուճի տաճարը, ճիշտ է, թվագրվում է նույնպես Հերակլի գահակալության տարիներով, թեև Հայաստանը այդ ժամանակ արդեն գտնվում էր արաբական գերիշխանության տակ։ Այս ևս հասկանալի է և տրամաբանական՝ վաղուց վերացել էին պարսից արքաները և ժամանակագրական միակ հաստատուն կովանը մնում էին բյուզանդական կայսրերի տարիները։ Մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ տաճարի թվագրությունը բերվում է ոչ արաբական խալիֆների, այլ բյուզանդական կայսրերի գահակալության տարիներով, ինքնին վկայում է, որ Հայաստանը այդ ժամանակ, VII դարի երկրորդ կեսին, ըստ էության անկախություն էր վայելում և արաբական տիրապետությունը լոկ ձևական բնույթ ուներ։

---

20 И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 393։
21 Նույն տեղում, էջ 395։
22 Նույն տեղում, էջ 386։

Ոչ պակաս նշանակալից է Մրենի տաճարի շինարարական արձանագրության մեջ հիշատակվող բյուզանդական պատրիկ, կյուրապաղատ, և հայկական սպարապետ տիտղոսների առկայությունը[23]։

Եվ իսկապես, ինչպե՞ս պատահեց (եթե մնանք արձանագրության թվագրման 613 թ. սահմաններում), որ պարսից ծառայության մեջ գտնվող մարզպանը մոռացավ պարսից արքայից շնորհված իր տիտղոսը և արձանագրության մեջ հանդես եկավ բյուզանդական տիտղոսներով։ Ա. Մանուչարյանը փորձում է բացատրել այս հանգամանքը այն ենթադրությամբ միայն, որ Դավիթ Սահառունուն կյուրապաղատի կոչում էր շնորհվել արդեն այն ժամանակ, երբ նա դեռևս պարսից ծառայության մեջ էր գտնվում։ Այս լոկ ենթադրություն է և չի հիմնված ոչ մի կոնկրետ վկայության վրա։

Ա. Մանուչարյանը այս հարցում առանձնակի նշանակություն է տալիս Գանձակեցու կողմից Դավիթ Սահառունուն «մարզպան» տիտղոսով կոչելու հանգամանքներին։ Նա գրում է, որ «եթե Գանձակեցին վկայում է, որ եկեղեցին կառուցվել է 613 թ., երբ Սահառունին մարզպան էր, իսկ արձանագրությունը հաղորդում է, որ նա կյուրապաղատ էր, ուստի միանգամայն պարզ է դառնում, որ 613 թ. մարզպան եղած ժամանակ Սահառունին ճանաչվել է նաև կյուրապաղատ Հերակլի կողմից»[24]։ Անհրաժեշտ է նշել, որ Գանձակեցու մոտ «մարզպան» օգտագործված է լոկ որպես «կառավարիչ» իմաստով, և նա այդ տիտղոսով է կոչում թե՛ պարսիկների, թե՛ բյուզանդական կայսրության և թե՛ արաբների կողմից նշանակված կառավարիչներին։ Այսպես, նրա մոտ մարզպան են և՛ Թեոդորոս Ռշտունին[25], և՛ Համազասպը[26] և Գրիգոր Մամիկոնյանը[27]։ Պարզ է դառնում, որ Գանձակեցու կողմից օգտագործվող «մարզպան» տիտղոսը բնավ չի կարող հիմք ծառայել նման հեռու գնացող եզրակացությունների համար։

Մյուս կողմից՝ Մանուչարյանը ըստ էության շրջանցում է արձանագրության մեջ հիշատակվող «սպարապետ» տիտղոսը, որը ըստ Հ. Օրբելու այն ժամանակ շնորհվում էր միայն բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայ զորավարներին[28]։

Բնականաբար հարց է առաջանում. մի՞թե այդ տիտղոսն էլ շնորհվել էր Հերակլի կողմից Դավիթ Սահառունուն արդեն այն ժամանակ, երբ նա դեռևս պարսից ծառայության մեջ էր գտնվում։ Իսկ եթե վերհիշենք, թե ինչպիսի իրադրություն էր ստեղծվել VII դարի 10-ական թվականներին, ապա պարզ կդառնա, որ կործանման եզրին կանգնած կայսրության շնորհած տիտղոսները հազիվ թե որևէ արժեք ունենային և այդ չէր էլ կարող աննկատ մնալ Պարսկաստանի կողմից, այն էլ այն բանից հետո, երբ մոռանալով պարսից արքայի շնորհած «մարզպան» տիտղոսը, Դ. Սահառունին հանդես է գալիս բյուզանդական տիտղոսներով։ Սակայն սա էլ բավական չէ. նա թշնամի երկրի կայսրին, որը կրում էր պարտություն պարտության ետևից, հիշատակում է ոչ այլ կերպ, քան «բարեհաղթող թագավոր» ձևով, մի բան, որը ակնհայտ

23 Նույն տեղում, էջ 399։
24 Ա. Մանուչարյան, նշվ. հոդվ., էջ 249։
25 Կիրակոս Գանձակեցի, էջ 56։
26 Նույն տեղում, էջ 62։
27 Նույն տեղում, էջ 63։
28 И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 399։

անաքրոնիզմ է, 613 թ. Հերակլը ոչ մի դեպքում չէր կարող «բարեհաղթող» համարվել։

Իսկ ինչպե՞ս հասկանալ «Հայոց և ասորւոց սպարապետ» տիտղոսը. չէ՞ որ այն կարող էր շնորհվել միայն այն ժամանակ, երբ երկու երկրներն էլ գտնվում էին բյուզանդական տիրապետության տակ և ոչ երբեք այն ժամանակ, երբ Հայաստանում վերականգնված էր Պարսկաստանի գերիշխանությունը, իսկ Ասորիքը ռազմի թատերաբեմ էր երկու թշնամի զորաբանակների համար։

Պակաս հետաքրքիր չէ նաև արձանագրության մեջ օգտագործված «շինեցաւ» և ոչ թե «հիմնարկեցաւ» բառը, որը թվում է ավելի է համապատասխան Ա. Մանուչարյանի առաջարկած 613 թվականին։ Այս բանում համոզվելու համար բավական է վերհիշել, թե ինչպես են բնութագրվում նման իրադրությունները VII դարի մյուս արձանագրություններում։ Այսպես. Բագարանի արձանագրության մեջ, երբ խոսվում է տաճարի հիմնադրման մասին, կարդում ենք. «...Երանելի տէր Բուտ առուեղեան ձգեաց հիմունս սուրբ եկեղեցւոյս...»[29], Բագավանում՝ «...հաճոյիւքն այ հիմնարկի սրբոյ եկեղեցւոյս»[30], Արուճում՝ «...հիմնարկեցան սուրբ կաթուղիկէս...»[31] և այլն։ Իսկ այնտեղ, որտեղ խոսվում է եկեղեցու շինության ավարտման մասին, օգտագործում են միանգամայն այլ բառեր։ Օրինակ. Բագարանում «...կատարեաց սուրբ եկեղեցիս», Ալամանում՝ «...շինեցաք զսուրբ եկեղեցիս...», Բագավանում՝ «...եղեւ կատարումն նոյն գործոյս»... և այլն։ Թվում է, որ Մրենի տաճարի «...շինեցաւ սուրբ եկեղեցիս...» արտահայտությունը կարող է վերաբերել միայն և միայն նրա ավարտմանը և ոչ երբեք տաճարի հիմնադրմանը։ Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ 613 թ. ոչ մի կերպ չի կարող ընդունելի լինել, և միանգամայն իրավացի է Հ. Օրբելին, երբ արձանագրությունը և տաճարի ավարտը թվագրում է 639 կամ 640 թվականներով։ Այս դեպքում իրենց տեղն են գտնում նաև Դավիթ Սահառունու բոլոր տիտղոսները՝ շնորհված բյուզանդական կայսրի կողմից, որն այդ տարիներին իրոք «բարեհաղթող» էր և իրոք կարող էր «Հայոց և ասորւոց սպարապետի» տիտղոս շնորհել իրեն հավատարիմ Դավիթ Սահառունուն։ Նման թվագրության հետ լիովին համապատասխանում են արձանագրության մեջ հիշատակվող աշխարհիկ և հոգևոր մի շարք գործիչների անունները, որոնք լավ հայտնի են նույն թվականին կառուցված այլ հուշարձանների արձանագրություններից։ Այդպես են թե՛ Թեոփիլոս եպիսկոպոսը և թե՛ Ներսեհ Կամսարականը, որոնք հիշատակվում են և՛ Ալամանում, և՛ Թալինում, և՛ Նախչավանում։ Եվ վերջապես, լիովին հասկանալի է դառնում ամբողջ արձանագրությունը Հերակլ կայսեր գահակալության տարիներով թվագրելը, մի բան, որը միանգամայն տրամաբանական է VII դարի 30-ական թթ. վերջի և 40-ական թթ. սկզբի համար։

Իսկ ինչ վերաբերում է Ա. Մանուչարյանի ենթադրությանը, որ տաճարի կառուցման տարեթիվը (ԿԲ=613) XIII դարի պատմիչները իրր վերցրել են բուն հուշարձանի արձանագրությունից, կարդալով այն դեռևս մինչև նրա եղծվելը, ապա այդ առնչությամբ պետք է ասել հետևյալը. Մրենի տաճարի արևմտյան ճակատի կենտրոնական մասում և մեզ հետաքրքրող արձանագրության սկզբում ու վերջում ագուցված են բազմաթիվ խաչքարեր, ընդ որում

[29] Նույն տեղում, էջ 393։
[30] Նույն տեղում, էջ 386։
[31] Նույն տեղում, էջ 402։

նրանք բոլորն էլ իրենց ձևերով չեն անցնում X—XI դարերից։ Այդ բանը հատկապես նշում է Թորոս Թորամանյանը, գրելով որ «...այս գործողությունը կատարված է VII դարում կանգնած Մրենի տաճարի արևմտյան ճակատում, հավանորեն XI—XII դարերում»[32]։ Մեկ այլ տեղ նա գրում է, որ Մրենում «...հատկապես զանազան չափերով մի խումբ խաչքարեր պատին ամրացնելու դիտավորությամբ շենքի ճակատի քարերը քանդել են և վերին աստիճանի ճարտարությամբ նրանց տեղը շարել X և XI դարերու խաչքարերը, որոնք մինչև այսօր պատին հետ ձուլված՝ մնացել են անվնաս»[33]։

Որ խաչքարերը իրոք պատկանում են X—XI դարերին, պարզ է դառնում արդեն այն լուսանկարից, որը հրատարակել է Գարեգին Հովսեփյանը[34]։ Բնականաբար հարց է առաջանում. ե՞րբ են կառուցվել այդ խաչքարերը։ Թվում է, որ միանգամայն իրավացի է Թորամանյանը վերագրելով դա XI—XII դարերին։

Եվ իսկապես, եթե այդ արված լիներ XIII դարում, ապա ոչ մի կասկած չի կարող լինել (ինչպես այդ կարելի է տեսնել նույն, XIII դ. բազմաթիվ այլ կառուցվածքներում), որ այնտեղ հնավանդ ձևեր ունեցող խաչքարերի հետ մեկտեղ անշուշտ կօգտագործվեին նաև XIII դ. խաչքարեր։ Սակայն միանգամայն այլ բան ենք տեսնում Մրենում, և մենք ոչ մի հիմք չունենք ենթադրելու, որ XIII դարում վերանորոգողները հատկապես որոնել են X—XI դարերի խաչքարեր և խուսափել XIII դարի խաչքարեր օգտագործելուց, մի բան, որը անհամեմատ ավելի հեշտ էր, քանի որ X—XI դարերում խաչքարերը զգալիորեն ավելի սակավ են հանդիպում, քան XIII դարում։

Այս ամենից կարելի է հանգել միայն մեկ եզրակացության՝ վերանորոգումը կատարվել է ոչ ուշ, քան XII դարը և այդ պատճառով էլ XIII դարի պատմիչները պարզապես չէին կարող տաճարի կառուցման տարեթիվը (613) ընթերցել շենքի վրայի արձանագրությունից։ Ի դեպ, նշենք, որ ԿԲ=613 թ. նշում է միայն Կիրակոս Գանձակեցին, իսկ մյուս պատմիչները, ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Օրբելին[35], ի նկատի ունեն նրա ավարտման տարեթիվը, այսինքն այն տարիները, երբ Դավիթ Սահառունին կյուրապաղատ էր նշանակվել Հերակլ կայսեր կողմից։

Ինչ վերաբերում է բուն արձանագրությանը և հատկապես նրա առաջին տողի առաջին բառին, ապա մեր կարծիքով այն սկսվել է (ԱՄԻ ԵՐԵՄՆԵՐ)ՈՐԴԻ ձևով (նկ. 2)։ Հերակլի գահակալության երեսուներորդ տարին համապատասխանում է 640 թ. և լիովին տեղավորվում այն տարիների մեջ, երբ Դավիթ Սահառունին իրոք Հայաստանում կյուրապաղատ էր նշանակված նույն Հերակլի կողմից։

Այսպիսով, առաջին քարը ամենայն հավանականությամբ ունեցել է այս տեսքը.

ԱՄԻԵՐԵՄՆԵՐ
ՊԵՏԻՀԱՅ
ՀԻՇԻՐԱ

32 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հատ. I, էջ 93։
33 Նույն տեղում, էջ 93։
34 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 173։
35 И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 399։


ԱՄԻԵՐԵՍՆԵՐ
ՊԵՄԻՀԱՅ
ՀԻՇԻՐԱ
ԱՅՆԵՐԿՐԻ
ԱՄԻՈՅՆԵՐԵՍՆԵՐ
ՊԵՄԻՀԱՅ
ՀԻՇԻՐԱ
ԱՅՆԵՐԿՐԻ

Նկ. 2

Առաջին տողը ստացվում է 10 տառ, երկրորդը՝ 7, երրորդը՝ 6։ Դժվար չէ տեսնել, որ արձանագրության շատ քարերի տարբեր տողերում կան տարբեր թվով գրեր և առաջին քարի տարբեր տողերում եղած գրերի քանակի տարբերությունը բնավ չպետք է տարակուսանք առաջացնի։ Այսպես, երկրորդ քարի առաջին տողն ունի 9 գիր, երկրորդ տողը՝ 7, երրորդ տողը՝ նույնպես 7 գիր։ Նույնը տեսնում ենք չորրորդ քարի վրա, իսկ յոթերորդ քարը ունեցել է առաջին տողում 8 գիր, երկրորդ և երրորդ տողերում՝ 11-ական գրեր։

Ինչ վերաբերում է ԱՄԻ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ձևին, ապա ԱՄԻ բառը լայնորեն տարածված է VII դ. շինարարական արձանագրություններում։ Բագարանում, օրինակ, կարդում ենք՝«Ներեսուն եւ չորրորդ ամի Խոսրովայ», Արուճում՝ «Ի և թ ամի Կոստանդնի մարերի»։

Այսպիսով, տաճարի շինարարական արձանագրությունը ի սկզբանե հավանաբար ունեցել է հետևյալ տեսքը (նկ. 2)։

Ամի երեսներորդի Հերակղի բարեյաղթող թագաւորի յիշխանութեան Դաւթի ամենագով պատրիկի կուրապաղատի եւ սպարապետի հայոց եւ ասորւոց եւ եպիսկոպոսութեան սրբասիրի տեառն Թեովփիղոսի եւ ի տանուտերութեան Ներսեհի Շիրակայ եւ աշարունեաց տեառն շինեցաւ սուրբ եկեղեցիս ի բարեխոսութիւն Կամսարականաց եւ Մրենոյ եւ ամենայն երկրի։

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Մրենի տաճարը հիմնադրվել է Կամսարական իշխանների կողմից, ամենայն հավանականությամբ 623 թ., երբ երկրի կյուրապաղատն էր Դավիթ Սահառունին, իսկ կաթողիկոսը՝ Կոմիտասը։ Այն կառուցվել է Ներսես Կամսարական իշխանի և Կամսարականների եպիսկոպոս Թեոփիղոսի անմիջական մասնակցությամբ և ավարտվել է 640 թ.։

* * *

Սակայն դժվար չէ նկատել, որ նման տեղաբաշխման ժամանակ ևս (ինչպես և Ա. Մանուչարյանի մոտ) վերջին տողի վերջին բառը դուրս է ընկնում ամբողջ համակարգից (նկ. 2), մի բան, որ չենք տեսնում նույն շրջանի այլ վիմական արձանագրություններում։

Եվ ճիշտ նույն տարակուսանքները, որ առաջ էին քաշվում Հ. Օրբելու կողմից առաջին տողի առաջին բառի խիստ երկար ստացվելու և այդ պատճառով էլ ընդհանուր սահմանից դուրս գալու մասին, նույնը կարող է լինել վերջին տողի վերջին բառի վերաբերյալ, որտեղ ունենք ճիշտ և ճիշտ նույն պատկերը, ինչ առաջին տողում Հ. Օրբելու վերծանության ժամանակ։

Մյուս կողմից, արձանագրության գրերի քանակի հետազոտությունը կասկած չի թողնում, որ այն գրված է մեծ հմտությամբ, և քանդակող վարպետը արել է ամեն ինչ, որպեսզի ճիշտ համաչափ պատկեր ստանա ճակատի կենտրոնական լուսամուտի նկատմամբ։ Այդ է վկայում արձանագրության երկրորդ տողը, որի լուսամուտից ձախ և աջ դասավորված մասերը ունեն ճիշտ և ճիշտ նույն քանակի գրեր, թվով 41։

Արձանագրության աջակողմյան մասի երկարությունը որոշվում է երրորդ տողի գրերի քանակով, որտեղ նրանց թիվը կազմում է 51։ Այս նախադրյալներից ելնելով էլ, երբ փորձում ենք որոշել առաջին տողի երկարությունը, ապա դժվար չէ տեսնել, որ գրերի նույն քանակն է ստացվում, երբ ընդունում

ենք Հ. Օրբելու վերծանությունը. այդ դեպքում գրերի քանակը հավասար է լինում 32-ի։

Այսպիսով, արձանագրության առաջին և վերջին տողերի դասավորությունը ստանում է համաչափ լուծում, այն տարբերությամբ միայն, որ եթե արձանագրության սկզբում գրերը դասավորված են քարի վերին մասում, ապա արձանագրության վերջում նրանք տեղավորված են արդեն քարի ներքևի մասում։ Ազատ մնացած տարածություններում ամենայն հավանականությամբ փորագրված են եղել խաչեր, մի բան, որը լայն տարածում ուներ միջնադարյան վիմական արձանագրություններում (նկ. 2)։

* * *

Ինչ վերաբերում է տաճարի ճարտարապետական ձևերին, ապա նրանք լիովին համահնչուն են այս թվագրությանը։ Մեր նպատակը չէ այստեղ հանգամանորեն վերլուծել այս ճարտարապետական հորինվածքը, սակայն անհրաժեշտ ենք գտնում հիշատակել, որ արդեն Մրենի տաճարի հատակագծային լուծման մեջ և հատկապես գմբեթակիր մույթերի ձևերում, որտեղ դեռևս շատ բան կա հնավանդ բազիլիկատիպ կառուցվածքներից, ակնհայտորեն դրսևորվել է երկայնական տիպերի և կենտրոնագմբեթ հորինվածքների սինթեզի գաղափարը, ընդ որում, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Մ. Տոկարսկին[36], այստեղ դեռևս գերիշխում են երկայնական տիպերում ընդհանրացած ձևերը։ Որոշ ժամանակ հետո է միայն, որ այս տիպի կառուցվածքներում գերակշռում է կենտրոնագմբեթ համակարգը, գմբեթակիր մույթերի եզրաձևերը ամբողջովին հարմարեցվում են գմբեթակիր կամարները կրելուն և ստանում կենտրոնագմբեթ տիպի կառուցվածքների մույթերին բնորոշ եզրաձև։ Այս հանգամանքը իր ցայտուն դրսևորումն է գտնում թե՛ Գայանեում (630) և թե՛ Բագավանում (631—639)։ Մինչդեռ մինչև այժմ մասնագիտական գրականության մեջ Մրենի տաճարը հիշատակվում էր իր ավարտման ժամանակով միայն (639—640) և այսպիսով, ըստ էության, դասվում Գայանեից հետո կառուցված հուշարձանների շարքը։ Հենց այս հանգամանքն էլ ակնհայտ հակասություն էր ստեղծում տիպի զարգացման մեջ և անհասկանալի էր դառնում Գայանեից հետո կատարված վերադարձը դեպի հնավանդ բազիլիկատիպ կառուցվածքներին բնորոշ ձևերը։ Իսկ այժմ, երբ պարզ է դառնում, որ Մրենի տաճարը կառուցվել է ոչ թե Գայանեից հետո, այլ հիմնադրվել է նրանից շուրջ յոթ տարի առաջ, հասկանալի են դառնում թե՛ նրա մույթերի ձևերը և թե՛ մի շարք ճարտարապետական ձևեր, որոնք սերտորեն առնչվում են նույն Կոմիտաս կաթողիկոսի կողմից կառուցված Հռիփսիմեի տաճարի հետ։ Մենք նկատի ունենք աբսիդի տակ եղած գետնափոր կառուցվածքը և հատկապես արևելյան աբսիդի երեք լուսամուտները, որոնք առաջին անգամ հանդես են գալիս 618 թ. Կոմիտաս կաթողիկոսի կողմից կառուցված Հռիփսիմեի տաճարում և հետագայում որոշ տարածում գտնում այլ հուշարձաններում։

Այժմ, երբ հնարավոր է դառնում ճշտել Մրենի տաճարի տեղը վաղ միջնադարյան հայ ճարտարապետության զարգացման պրոցեսում, անհամեմատ

---

36 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV веков, Ереван, 1961, էջ 97։

ավելի լայն հնարավորություններ են ստեղծվում այս ուշագրավ տիպի դարգացման ուղիները պարզելու համար։

Ի վերջո նշենք, որ միաժամանակ ի դեր են դառնում որոշ ուսումնասիրողների փորձերը այս տիպի շինարարությունները Հայաստանում օտարամուտ համարելու բոլոր փորձերը։

Մենք նկատի ունենք Գ. Ն. Զուբինաշվիլու տեսակետները[37], որը ելնելով Ծրոմիի թվագրումից (625—635) և հայկական նույնատիպ հուշարձաններից ամենավաղը համարելով Գայանեն (հիմնադրված 630 թ.), իսկ Մրենն էլ հիշատակելով իր ավարտման ժամանակով (639—640), Ծրոմիի տաճարն է համարում Կովկասի նույնատիպ կառուցվածքների նախատիպը և հայկական հուշարձանները պատկերում ոչ այլ կերպ, քան պատրաստի ձևերի ընդօրինակման արգասիք[38]։ Նրա կարծիքով այդ տիպի ներթափանցումը Հայաստան իբր «հիմնավորվում» է Գայանեի տաճարը կառուցել տվող Եղր կաթողիկոսի քաղկեդոնական լինելու հանգամանքներով, և կառուցվող տաճարը վրացական քաղկեդոնական եկեղեցու նորակառույց Ծրոմիի տաճարին նմանեցնելու ցանկությամբ։ Մինչդեռ մասնագիտական գրականության մեջ վաղուց հայտնի են այդ կարգի կառուցվածքների նախատիպերը Հայաստանում։ Այն առկա էր արդեն V դարի վերջին Տեկորում (հնագույն բազիլիկայի գմբեթավորումից հետո) և Օձունում, որի հոյակերտ տաճարը կառուցվել է ամենայն հավանականությամբ ոչ ուշ, քան VI դարի կեսերին։ Գ. Ն. Զուբինաշվիլուն, անշուշտ, հայտնի են այդ հուշարձանները, սակայն նա մի կողմ է թողնում դրանք, Տեկորը՝ իբր թվագրության հարցը պարզված չլինելու պատճառով, իսկ Օձունը առանց որևէ հիմքի տանելով VIII դար։

Այժմ, երբ պարզ է դառնում, որ Մրենի տաճարը հիմնադրվել է Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ, ամենայն հավանականությամբ 623 թվականին, ինքնին իրենց տեղերն են գրավում VII դարում այս հնավանդ տիպի վերարտադրության արգասիք հանդիսացող բոլոր հուշարձանները (այդ թվում նաև Ծրոմին), և պարզ է դառնում, թե որտեղ է սկիզբ առել և մշակվել այդ տիպը, ինչ ուղիներով է զարգացել և ինչպես է տարածվել ամբողջ վաղ միջնադարյան Կովկասում։

---

37 Г. Н. Чубинашвили, Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967, էջ 48։

38 Գ. Զուբինաշվիլին Հ. Օրբելու դրույթները «հարմարեցնում» է իր կանխամտածված տեսակետներին։ Հ. Օրբելին գրում է. «Ինչ վերաբերում է մեր արձանագրությանը և հետևապես Մրենի տաճարի շինարարության ավարտին (ընդգծումը մերն է—Ս. Մ.), կասկած չի կարող լինել, որ այն կապված է Դավիթ Սահառունու կյանքի այն շրջանի հետ, երբ նա արդեն պարսկական մարզպան չէր, այլ Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչը» և հետո՝ «Ինքնին հասկանալի է, որ Մրենի տաճարը չէր կարող շինվել Դավիթի ստրատելատության կարճ ժամանակաշրջանում. այդ տարիներին այն ավարտվել է միայն։ Եթե Դավիթին վերագրենք ամբողջ տաճարի շինարարությունը, սկսած նրա հիմքերից, ապա այն պետք է հիմնադրված լինի դեռևս Դավիթ Մարզպանի ժամանակ։ Այդ էլ, գուցե, ակնարկում է Կիրակոսը, որի համաձայն տաճարը կառուցվել է (հավանաբար հիմնադրվել) 613 թվականին» (И. А. Орбели, Избранные труды, էջ 399)։

Սակայն տաճարի նման թվագրումը, երբ Ծրոմին ստացվում է ավելի ուշ շրջանի գործ, քան Մրենի տաճարն է, անշուշտ, չէր կարող բավարարել Զուբինաշվիլուն։ Եվ ահա, առանց վարանելու նա գլխի վրա է շուռ տալիս Հ. Օրբելու դրույթները և դուրս բերում, որ 639—640 թթ. ոչ թե ավարտվել է Մրենի տաճարի շինարարությունը, այլ... սկսվել միայն։ Նա այդպես էլ գրում է, նշելով, որ «...639—640 թթ. սկսվել է Մրենի շինարարությունը» (Г. Н. Чубинашвили,

КОГДА БЫЛ ВОЗВЕДЕН МРЕНСКИЙ ХРАМ?

Доктор архитектуры С. Х. МНАЦАКАНЯН

(Резюме)

Среди памятников армянского раннего средневековья особое место занимает храм в Мрене. Противоречивость сведений историков и дефективность строительной надписи, где отсутствует камень с датой, послужили причиной того, что датировка храма колебалась в значительных пределах (613—670). Анализ строительной надписи и расшифровка лакун привели акад. И. А. Орбели к выводу, что строительство храма было завершено в годы правления князя Давида Сааруни (639—640). Однако А. Манучарян оспаривает выводы И. А. Орбели и датировку храма и надписи переносит в 613 г.

На основании анализа исторических сведений строительной надписи и оставшегося до сих пор незамеченным свидетельства историка Степаноса Таронаци (X в.) о возведении храма в Мрене в годы правления католикоса Комитаса автор приходит к выводу, что храм был заложен в 623 г., а строительство его было завершено, как на это правильно указывал И. А. Орбели, в 640 г. Именно в это время и была высечена строительная надпись.

Это еще раз показывает неубедительность утверждений проф. Г. Н. Чубинашвили о привнесенности данного типа храма из Грузии, причем, по его мнению, прототипом армянских сооружений этого вида якобы служил храм в Цроми (626—623). Искажая мысль И. А. Орбели о том, что строительство храма была *завершено* в 639—640 гг., Г. Н. Чубинашвили считает их годами *начала строительства* храма.

Исследование показывает, что данный тип имеет глубокие корни в армянском зодчестве, которые восходят к текорскому храму — древней базилике, превращенной в купольную базилику еще в конце V в. Процесс формирования типа купольной базилики фактически завершился ко второй половине VI в., когда и был возведен Одзунский храм — непосредственный предшественник купольных базилик Кавказа.

Цроми, М., 1969, *էջ 67) և որ Մրենի տաճարը, «...կառուցված Դավիթ Սահառունու կողմից, զգալիորեն տարբերվում է Գայանեի եկեղեցուց և Բագավանի տաճարից, մի բան, որը և հաստատում է նրա կառուցման սկիզբը՝ 639—640 թթ.) (նույն տեղում, էջ 108)։*

Սակայն այստեղ ուշագրավը այս նոր թվագրության «հիմավորումն» է և, որքան էլ անհասկանալի լինի, նա այդ հիմնավորում է Հ. Օրբելու նույն հոդվածով, որից մենք մեջբերում կատարեցինք։